

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5**  
**2014թ. նոյեմբերի 13-ին տեղի ունեցած**  
**Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի**  
**խորհրդի արտահերթ N5 նիստի**

Նախագահ՝ Ա.Գրիգորյան

Քարտուղար՝ Հ.Եղիկյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 17 անդամներից 17-ը:

**Օրակարգ:**

1. Անհատական աշխատանքների կազմակերպման ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման, ակադեմիական խորհրդատուների գործունեության ընթացակարգերի մասին:

2. Մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների ցանկը

**Լսեցին.-** 1. Անհատական աշխատանքների կազմակերպման, ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման, ակադեմիական խորհրդատուների գործունեության ընթացակարգերի մասին:

**Արտահայտվեցին .-** աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը , կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Մարգարյանը:

**Որոշեցին.-**

1.Չհամաձայնել 2.4կետի մեջ նշված <ծրագրային նյութից դուրս> արտահայտության հետ: Լինելով ընթացիկ ստուգման ձև, անհատական աշխատանքը պիտի օգնի ուսանողին ամփոփիչ ստուգման համար:

2. Չի կարելի ստանդարտացնել անհատական աշխատանքը՝ պահանջելով մեկ թեմա: Հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները թույլ տալ 100 միավորի սահմանում դասախոսը որոշի առաջադրանքի ձևը /ենթադրենք, 3 հարց-30,30,40 միավորանոց, թեստային տարաբնույթ առաջադրանքներ և այլն/:
3. Ձեր առաջարկած պահանջների դեպքում որպես ընթացիկ ստուգում, այն 20%-ին հավասարագոր չէ առաջին ընթացիկի հետ համեմատացած:
4. Առաջին ընթացիկի մուտքագրումից հետո գրավոր աշխատանքները չի պահվում, ինչու որպես 2-րդ ընթացիկ անհատականը պահել մեկ տարի:
5. Ակադեմիական խորհրդատուների գործունեության ընթացակարգի մեջ վերանայել 3.7 կետը:

**Լսեցին.**- 2. Մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների ցանկը

**Արտահայտվեցին .-** աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը , կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյանը:

Քննարկվեց ամբիոնի վարիչների կողմից առաջարկված մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների ցանկը :

**Որոշեցին.**- Արտաքին կապերի բաժին ներկայացնել ֆակուլտետի կողմից մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների ցանկը գիտական խորհրդում հաստատելու համար:

Կից ներկայացվում է ֆակուլտետի կողմից մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների ցանկը:

Նախագահ՝  
Քարտուղար՝  
13.11.2014թ.

Ա.Գրիգորյան  
Հ.Եղիկյան